ՏԵՂԵԿԱՆՔ

‹‹ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ›› ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղեկատվական տեխնոլոգիաները, էլեկտրոնային կառավարումը և հեռահաղորդակցությունը հանդիսանում են յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական զարգացման կարևոր գործոն:

Երկու երկրների միջև կապի, հեռահաղորդակցության և տեղեկատվայնացման ոլորտներում երկկողմ հարաբերությունները սերտացնելու և փոխադարձ շահավետ համագործակցություն ձեռքբերելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև նախատեսվում է ստորագրել ‹‹Տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնային կառավարման և հաղորդակցության ոլորտում համագործակցության›› վերաբերյալ Համաձայնագիր:

Սույն Համաձայնագիրը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև հաստատել միջկառավարական համագործակցություն և հարաբերություններ՝ նպատակ ունենալով միավորել երկու երկրների ջանքերը տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնային կառավարման և հաղորդակցության ոլորտում փորձի փոխանակման և լավ փորձառնության համար:

Համագործակցության ոլորտները կլինեն լայնածավալ և կներառեն այնպիսի ասպեկտներ, ինչպիսին են էլեկտրոնային ծառայությունները, էլեկտրոնային կառավարումը և կիբերանվտանգությունը, էլեկտրոնային հաղորդակցությունը և փոստային ծառայությունները:

Վերոնշյալ Համաձայնագիրը հնարավորություն կտա զարգացնելու փոխադարձ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության պետական կառավարման մարմինների միջև, ինչպես նաև գործարար կապեր ստեղծել տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնային կառավարման և

հեռահաղորդակցության ոլորտում ներգրավված ընկերությունների և կազմակերպությունների հետ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք նպատակահարմար Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնային կառավարման և հաղորդակցության ոլորտում համագործակցության մասին Համաձայնագրի ստորագրումը:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար /**Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**